

ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ ԳՈՐԱՅՔ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ

Ս/թ նոյեմբերի 3-ին ՀՀ Սյունիքի մարզպետ Մելիքսեթ Պողոսյանը Գորայք համայնքում կատարել է քաղաքացիների ընդունելություն:

Ընդունելությանը ներկայացել է 6 քաղաքացի:

Դրամական օգնություն ստանալու խնդրանքով դիմել էր երեք, համայնքի հիմնախնդիրների, ոռոգման ջրով ապահովելու, ճանապարհային նշանների տեղադրման, հարցերով՝ մեկական քաղաքացի:

Դրամական օգնության դիմումներից երկուսին տրվել է դրական լուծում, մեկը՝ մերժվել է:

Մարզպետարանի համապատասխան ստորաբաժանումներում մարզպետի հանձնարարությամբ ուսումնասիրվում է համայնքի հիմնախնդիրների, ոռոգման ջրով ապահովելու, ճանապարհային նշանների տեղադրման վերաբերյալ դիմումները: